

տեղեաց, և հաստատեսցի այս օրինօք դատարանի, մի յետոյ հակառակեսցին ընդ միմիանս. զի յայտնի լինի թէ յոյնքն միայն շինելոյ ունին հրաման, և ոչ բոլորին տիրելոյ և ամենայն հրովարտակք զորս առեալ են երկոքին ազգքն, ամենեքեան անվաւեր և խափանեալ համարեսցին և միայն յարգեսցին հրովարտակք Սէլիմայ, տուեալ ի թուին Հիջրէթի 923: Եւ նոր հրովարտակքն, զորս հանդերձեալ եմք տալ երկոցունց, արձանագրեսցին յամենայն դիւանս և մի օրինակն պահեսցի ի գանձն արքայիս:

Հրովարտակներ ի կայսերական կնքով վաւերացումն տեղի ունեցաւ 1812 թ. դեկտեմբերի 13-ին և յանձնուեց հայերին և յոյներին յունվարի 13-ին. որքան հայք ուրախ էին այնքան էլ յոյները, որ միայնակ կամենում էին իրաւատէր լինել Երուսաղեմում, տրտում:

Սակայն հրովարտակով խնդիրը չլերջացաւ. վէճ, կռիւ, հակառակութիւն յոյների և հայերի միջև և ձգձգումնք թուրք պաշտօնեաների կողմից երկար տարիներ շարունակուեցին, և երկուստեք մեծամեծ ծախքեր եղան, թէ և կայսերական հրովարտակի մէջ հիմք առնելով Մէլիք Սալահատինի և Սուլթան Սուլէյման առաջինի հրովարտակները, իւրաքանչիւր ազգի սեպհականութիւն անուն անուն յիշուած է:

Յ. Ա. Ե.

ԲԱԴԱ ԳԻՒՂԻ ԱՒԵՐՈՒՄԸ

ԺԲ.

Հափմեանի և Բասումեանի սպանութիւնը. Ալլահեար Բեգը և Գրիգոր Բահանան. Վերջինիս համակը. Ալլահեար Բեգի նամակը. Բաղայի վնասների հաշուեցուցակը: Տխուր հաճդես:

Վերը յիշատակուեց, որ Բադայի լիախօտական հայերի մի մասի համար ստեղծուեց էլի մի ընտկավայր Քէշիշքեանդ գիւղում Ալլահեար Բէգ Զիւլֆադարովի հովանաւորութեան տակ: Այդտեղ հաւաքուեցին մինչև 60 հոգի երկսեռ հայեր: Նրանց պարագլուխն էր Գրիգոր քահանայ Տէր Աբրահամեանց, որի

գերդաստանը տարադրութեան էր գնացել Շամշադինու և Ղազախի հայ գիւղերը: Քէշիշքեանդի հայերի մեծամասնութիւնը այն երկսեռ հայերն էին, որոնք գերի էին բռնուած մերձաւոր թուրք գիւղերում (Իրմաշլու, Խըննալու և այլն) և որոնց Գրիգոր քահանայի միջնորդութեամբ ազատել և ժողովել էր Ալլահեար բէգ Ձիւլգադարովը:

Չնայելով այդպիսի հզօր պաշտպանին, որպիսին Ալլահեար բէգն էր, վերջինիս հովանաւորութեան ներքոյ եղած հայերը այնքան էլ ապահով չէին: Նրանցից Պետրոս Հաքիմեանց և Յոհաննէս Բաշտումեանց Ագրլիանց Պետրոսի և Պրոնիկանց Իվանի հետ քաղցած լինելով գնել էին ջրաղացից մի քանի բուռ ալիւր և նրանից հաց թխելու համար ծածուկ մտել էին ծանօթ թուրքի տուն: Գիշեր ժամանակ բազլիգեցի երկու թուրք բռնութեամբ և նենդութեա քնէրահալում են հայերին և տանելով Ձադեամ գետի ափը, սպանում են Հաքիմեանին և Բաշտումեանցին, իսկ միւս երկուսը մի հրաշքով ազատուում են: Այս վրիժառութիւնը տեղի է ունեցել այն պատճառով, որ այդ սպանողներն մի ազգակից սպանուել է Բադայի աւարի ժամանակ՝ յայտնի չէ. հայի գնտակից թէ թուրքի:

Այս բանը շատ զայրացրեց Չարգախլուի հայերին և աւելի ևս գրգռեց նրանց Ալլահեար բէգի դէմ, որ յանձն էր առել պատսպարել բադացի թշուառ հայերին, բայց չէր ապահովել նրանց կեանքը: Թուրքերի յարձակումները ու սպանութիւնները հայերը համարում էին հետեանք ազգեցիկ մարդկանց թելադրութեան. լրագրերի * թղթակիցները գովելով այդ առաջաւորներից մի քանիսին և պախարակելով միւսներին՝ աւելի հաստատում էին հայերի կասկածը:

Չարգախլուի պաշտպան, լաւ կազմակերպուած ռազմիկ խումբը չէր ուզում ներել Ալլահեար բէգին, որ հրաւիրուելով Բադա (գլ. Գ.), միամտացրել էր բադացիներին, խոստացել էր իւր հովանաւորութեան տակ առնելով՝ անվտանգ պահել, բայց չէր կարողացել կատարել իւր խոստումը. նրա այս վարմանց համար և, «ատամն ընդ ատաման» սկզբունքով առաջնորդուելով՝ հայկական խումբը յաջող ըսպէ էր որոնում պատժելու այդ և միւս բէգերին. և չէր թաղցնում իւր դիտաւորութիւնը. ուստի Ալլահեար բէգը ամեն կերպ աշխատում էր հաշտութիւն կայացնել չարգախլուեցոց հետ և այդ նպատակի համար բէգը հաճութեամբ գերիններ էր փրկում, ժողովում էր նրանց իւր շուրջը, թաղել էր

* Արշալոյս, 1906 թ. № 2. Յունուարի 4-ը:

** Նոր—Դար 1906 թ. № 4. Յունուարի 6-ը:

տալիս Բաղայում ցրուած հայ ոսպանուածներին և Գրիգոր քահանային, իբրև կարևոր մարդու, պահում էր իւր մօտ և դեսպանութեամբ ուղարկում էր չարդախուեցոց մօտ:

Չարդախուեցիք չէին ցանկանում, որ փրկուած հայերը մնան Քեշիշքեանդում կամ միւս բէգերի մօտ և վայելեն նրանց մարդասիրութիւնն ու հովանաւորութիւնը: Թող դնան հայ գիւղերը, թող չարքաշ կեանք վարեն, միայն թէ չմնան բարերար բէգերի մօտ: Եւ այն հայերը, որոնք շարունակում էին մնալ բէգերի մօտ, որոնց թւում և Տէր Գրիգորն ու նրա եղբայր Ղահրամանը և շատերը, կասկածելի էին համարուած չարդախուեցոց աչքում:

Երբ Գրիգոր քահանան դեսպանութեամբ եկաւ չարդախուեցոց մօտ, նրանից պահանջեցին, որ վերադառնայ Ալլահեար բէգի մօտ և դուրս բերի Քեշիշքեանդից հայերին: Արդարև Ալլահեար բէգը չընդդիմացաւ, արձակեց 56 հայերից 27-ին դէպի Ղուլլալի, 23-ին դէպի Չարդախու, իսկ մինին միայն պատանդ պահեց իւր մօտ, այդ Գրիգոր քահանան էր: Վերջինս, իբրև բէգի դեսպան, պատմեց Չարդախուում հոտաբաղաց խորհրդի առաջ գործերի զրութիւնը և խնդրեց ներկայացուցիչներ ուղարկել Ալլահեար բէգի մօտ, փոխադարձ հաշտութիւն կայացնելու: Ընտրուեցին և գնացին Քեշիշքեանդ պ. Մանասեանցը և տանուտէր Պետրոս Բաբաջանեանց. ուղեկցեց և Տէր Գրիգորը:

Այդտեղ թէև առերես հաշտութիւն կայացաւ, բայց ոչ չարդախուեցիք հանեցին իրանց սրտից ոխը, և ոչ Ալլահեար բէգը փարատուեց սրտի ահից: Գրիգոր քահանան չափից դուրս աշխատում էր փոխադարձ հաշտութեան օգտին, որպէս զի իւր անձն ազատի և դնայ իւր գերդաստանի մօտ: Բայց Ալլահեար բէգը յամառութեամբ պահում էր նրան: Ուղարկեց քահանային Բաղայի աւերակները, որ ցրիւ դիակները ժողովի և քրիստոնէական ծիսով թաղի: Այդ էլ կատարեց քահանան, բայց էլի չկարողացաւ ազատութիւն գտնել: Քանիցս քահանան աղերսանքով, մինչև անգամ արտառուքն աչքերին զիմեց բէգի գթութեանը, խնդրեց ազատութիւն, բայց բէգը մնաց անդրդուելի: «Մինչև անգամ լաց ու սուգ էի անում, որ ազատի (բէգը), շեղաւ», գրում է հեղինակին քահանան իւր նամակի մէջ 1907 թուի յունիսի 18-ին:

Անտանելի էր քահանայի դրութիւնը: Մի կողմից գերդաստանի անյայտութիւնը տարագրութեան մէջ, միւս կողմից իւր կաշկանդուած կացութիւնը բէգի մօտ, երրորդ կողմից այն յամառ կասկածը, որ ունէին նրա վերայ Չարդախուի և այլ

տեղի հայերը: Իսկ Ալլահեար բէգը մեծայոյս էր, որ քահանայի միջնորդութեամբ ինքն իրան կարող է արդարացնել Քանձակի ու Թիֆլիզի հասարակութիւնների առաջ, որոնց արդէն լրագրութիւնից յայտնի էր նրա կոտորած քաղաքականութիւնը:

Այս ուղղութեամբ Ալլահեար բէգը վերջին փորձը արաւ: Նա գերդաստանով հանդերձ առժամանակ տեղափոխուելով Թիֆլիզ՝ տարաւ իւր հետ և Գրիգոր քահանային, որ սա տեսակից տեղական հայ և ռուս խմբագրութիւնների հետ և անձամբ վկայի բէգի ազնւութիւնը, մարդասիրութիւնը և գթասրտութիւնը: Սակայն քահանան չլստահացաւ այդ անել: Միայն «Նոր-Պարի» մէջ 1906 թուականի յունուարի 6-ին № 1 նա հրատարակեց Բաղայի աւերման մասին նամակը, որի մէջ գովասանք չէր խնայել Զիւլգադարով բէգերի և առանձնապէս Ալլահեար բէգի մասին:

Նա ի միջի այլոց գրում է.

«... Բէգը (Ալլահեար) գնում է Զադեամ կայսրան, հաւաքում է բոլոր շրջակայ բնակչութեան միջի իշխաններին և բէգերին, խնդրում է չկռուել հայերի հետ և մանաւանդ Բաղա գիւղի վերայ չյարձակուել. բոլորն էլ երդում են, խոստանալով որ Բաղա գիւղի վերայ չեն գնալ: Միայն խնդրում են, որ բէգը գնայ Քանձակ հայերին և մուսուլմաններին հաշտեցնելու. Զիւլգադարովը հաւատալով իւր կրօնակիցներին երդմանը, գնում է Քանձակ: ... Միւս օրը, ամիս (նոյեմբեր 15 թ.) 23 էլի շրջապատեցին (Բաղա) և մի քանի զրօշակ ձեռքներին՝ սկսեցին հրացանաձգութիւն. ... Այդ գիշերը (նոյեմբ. 23) հազիւ կարողացայ 500 հոգի ազատել և փախցնել դէպի Համիդ բէգ, Մեհրալի բէգ և Ադիլ բէգ. Զիւլգադարովների տուն: Այստեղ մեզ սիրով ընդունեցին. տեսնելով թշուառներին դրութիւնը, նրանք էլ էին արտասուք թափում մեզ հետ: Յիշեալ Զիւլգադարովները մորթեցին երկու պարարտ կով և կերակրեցին բազմաթիւ ժողովրդին:

«... Միւս կողմից դուրս եկաւ Ալլահեար բէգ. Զիւլգադարովը մի քանի վերաւոր կանանց հետ և զրկած մի 15 օրական մանուկ, որի մայրը չկար: Բարեսիրտ բէգերը սրանց դրութիւնը տեսնելով՝ լոց էին լինում կանանց հետ: Մի քանի վերաւոր կանանց և մանկանք տարաւ Ալլահեար բէգը, իսկ 200 հոգուն տարաւ Համիդ բէգը: Մի քանի օր նրանց լաւ կերակրելուց յետոյ՝ ուղարկեցին Շամշադինի վիճակի Ղուլալի գիւղը... Ալլահեար բէգ. Զիւլգադարովը իւր տարած մանկանք յանձնեց իւր կնոջը և պատուիրեց լաւ պահել, մինչև մօրը գտնի: Բարեխիղճ խանութը սկսեց կովի կաթով պահել մինչև

16 օր: Պէտք էր տեսնել, թէ բէգի աղջիկներն ինչպէս էին մանկանը դրկած համբուրում, մանկանն անուանեցին Կարապետ: Վերաւոր կանանց վէրքերն ինքը խանութն էր լուանում և իւր աղջիկները դեղ էին դնում և լիաթաթում: Երեք շաբաթ պահելուց յետոյ նոր շորեր հագցրին և ուղարկեցին Չարգախլու գիւղը*:

Այն, ինչ որ Գրիգոր քահանան յիշատակում է իւր նամակի այս կտորների մէջ, արդէն վերեւը բացատրուած է պատմութեան ընթացքում: Տեղեկութիւնները հաւաքուած են բուրովին սուրիշ աղբիւրներից և ընթերցողին կմնայ համեմատել այս աղբիւրները Գրիգոր քահանայի ասածների հետ:

Այս նիւթի վերաբերութեամբ մենք ունենք և այլ բացատրութիւններ: Դրանք իւր, Ալլահեար բէգի խօսքերն են, որ ապագրուած են նրա նշանաւոր նամակի մէջ Тифлисский Листок-ը ուսեսերէն թերթում հրատարակուած և որի թարգմանութիւնն ահա այս է.

«Պարոն խմբագիր.

Новое Обозрѣніе թերթից արտատպուած էր Тифл. Листок-ի 1906 թուի № 18-ում, թէ ամսի 21-ին հայերից մի պատգամաւորութիւն է ներկայացել Փոխարքայի զինուորական մասի օգնական գեներալ — լէյտենանտ Մալամային և նրան ներկայացրել է Ղազախի գաւառի Քարմանսարայ գիւղից, յունուարի 20-ին ստացած մի հեռագիր: Հեռագրի մէջ ասուած է, որ Խըննալուից մի քանի թուրք գերի են հայերի մօտ, իսկ կալուածատէր Ալլահեար բէգ Զիւլգադարովի մօտ գերի են քահանայ տէր Աբրահամեանցը և ազրոնոմ** Դանիէլեանցը, գիւղացի մաշադի Հասան Զիւլգադարովի մօտ գերի են Աւետիս Լևոնեանցը իւր գերդաստանով 5 հոգուց և Գրիգոր Աբրահամեանցը նոյնպէս իւր գերդաստանով: Պատգամաւորները խնդրել են միջոցներ գործ դնել ազատել գերիներին, այլ և փոխանակել գերիներին:

Խնդրում եմ այս իմ նամակը տպագրէք մօտաւոր համարում գործը լուսաբանելու նպատակով:

«Բազա գիւղն աւերելուց յետոյ Զիւլգադարով եղբայրների տանը հաւաքուեցին աւելի քան 1200 բաղացի փախստականներ, որոնց մէջն էին քահանայք Տէր Աբրահամեանցը, Տէր Յարութիւնեանցը, ուսուցիչ Աստուածատուրեանցը, Ղահրաման տէր Աբրահամեանցը, Սարգիս Գրիգորեանցը և Ղահրա-

* Նոր-Պար 4906 Թ. յունուարի 6, № 4:

** «Ղահրաման» եւ ոչ Ազրոնոմ (զիւղաստան): Խանօթ. հեղինակի. Տես նաեւ Մշակ № 15 յունուարի 22—4906 Թ. հետադիր:

ման Գանիէլեանց: Մի քանի օրից յետոյ, երբ մենք ուղարկում էինք հայ փախստականներին Ղուլալի հայ գիւղը, բահանայ տէր Յարութիւնեանցը գնաց փախստականների հետ, իսկ յիշեալներից միւսները չկամեցան գնալ այնտեղ: Առսուցիչ Աստուածատուրեանցը, Ղահրաման Տէր Աբրահամեանցը և Սարգիս Գրիգորեանցը ցանկացան գնալ Գանձակ, որովհետեւ առաջինի ծնողներն այնտեղ են, իսկ միւս երկուսը ունեն այնտեղ առեւտրական գործեր: Որովհետեւ ժամանակն անհանգիստ էր և նրանց ուղարկելը վտանգաւոր, ուստի առաջուց նամակ ուղարկեցինք Գանձակ նրանց ծնողներին, որ անհանգիստ չլինեն: Դրանից յետոյ երկաթուղու գործադուլն եղաւ, որից ստիպուած նրանք բաւական ժամանակ մնացին մեզ մօտ և ապա յաջող ժամանակ նրանք ուղարկուեցին Գանձակ յուսուլի պահպանութեան տակ: Իսկ բահանայ տէր Աբրահամեանցը իւր գերդաստանն ուղարկելով Ղուլալի, ինքը մնաց իմ տանն այն նպատակով, որ թաղի Բաղայի սպանուածների մարմինները, որոնք և գտնի այն հայ փախստականներին, որոնք թագնուել էին անտառի խորքերում, այլև գնայ Չարգախու, ուր բնակւում էին հայ—թրքական ընդհարումների զլխաւոր սարքողները, հեղինակաւոր կերպով նրանց քարոզելու համար, որ գոնէ տպագայում նոր ընդհարումներ չյառաջացնեն, որ երկու կողմի համար էլ կորստաբեր է:

«Այս նպատակի համար Տէր Աբրահամեանցը երեք անգամ գնաց Չարգախու, բայց տարաբաղաբար նրա աշխատանքը կարաւ իզուր: Նրա հովուական խօսքը չունեցաւ կարեւոր ներգործութիւն և հարկաւոր ազդեցութիւն: Սրանից յետոյ թուրքերի և հայերի յարաբերութիւնը Ղաղախի գաւառում խիստ լարուեցին, ուստի նա չկարողացաւ գնալ Ղուլալի և մնաց ինձ մօտ մինչև յունուարի 25-ը. այժմ նա Թիֆլիզումն է և խոստացաւ մտնել խմբադրատուն և մանրամասը բացատրել, թէ ես նրան ինչպէս գերի եմ պահել: Իսկ Ղահրաման (և ոչ Ազրանսմ, որպէս տպագրուած էր լրագրում) Գանիէլեանցը բնակւում էր ինձ մօտ ոչ միայնակ, այլ 7 հոգի գերդաստանով: Ես նրանց ուղարկեցի Չարգախու, որտեղից նրանք մի քանի օրից յետոյ նորից վերադարձան ինձ մօտ, բերելով իրանց հետ և 8 հոգի բաղացի համագիւղացիներ: Թէ ինչի նրանք վերադարձան ինձ մօտ և թէ ինչպէս էին վարուել նրանց հետ չարգախուեցի եղբայրակիցները, թող ասեն իրանք, թէ և նրանց վերադառնալն ինձ մօտ ինքն ըստ ինքեան ապացոյց է: Գանիէլեանցի հետ եկած 8 մարդկանց, նրանց խնդրելով, ես ուղարկեցի Ղուլալի: Իսկ Գանիէլեանցն իւր գերդաստանով բնակւում

է ինձ մօտ մինչև այժմ: Մաշագի Հասան Զուլփադարով անունով մարդ չկայ ամբողջ Անդրկովկասում, ուրեմն չէին կարող լինել նրա մօտ գերի հայեր, ինչպէս հաղորդուած է Тиф. Листокъ № 18 թերթում:

«Վերոյիշեալ տողերից երևում է, որ ինձ մօտ ոչ եղել են և ոչ էլ կան գերի հայեր և որքան ճշմարիտ են այս հաղորդածներս և թէ եղբարք Զուլփադարովները ո՞ր աստիճանի վերաբերմունք ունէին դէպի փախստական բաղացի հայերը, ես դիմում եմ այս նամակի մէջ յիշուած հայերի խղճատանքին և արժանապատուութեանը և խնդրում եմ նրանց պատասխանել այս հարցերին ապագրութեամբ: Եւ որպէս զի յիշեալ անձնաւորութիւնները միջոց և կարողութիւն ունենան տալ անհրաժեշտ պատասխան, խնդրում եմ անդրկովկասեան լրագրների, մանաւանդ հայ լրագրների խմբագրութիւններից արտատպել այն այս նամակս:

«Վստոր ասածներէլցս լրագրիդ բնթերցողները և Тифлисскій Листокъ-ի խմբագրութիւնը հեշտ կարող են համոզուել, որ ոչ ինձ մօտ և ոչ իմ եղբայրների մօտ գերի չեն եղել ոչ քահանաներ, ոչ գիւղատնտեսներ, այլ որս մէջ յիշուած անձնաւորութիւնները և նրանց դերաստանները գտել էին և օմանք նրանցից մինչև այժմս էլ գտնում են ապաստարան և կարելոյն չափ պաշտպանութիւն իմ յարկի տակ:

«Ժամանակ է վերջ տալ արիւնալից կռիւներին: Կին ամուսիններին, մայրերին, երեխանց բաւական է դառն արտասուք թափել: Նրանց արդարացի արտունջը անփոխարինելի կորուստների պատճառով աղաղակում են հասարակութեանը դնել իւր հեղինակաւոր արգելքը Կովկասի երկու ազգութիւնների արիւնոտ կռիւը այլ ևս շարունակելու: Փոխարքայի մայրաքաղաքի հասարակաց կարծիքը պարտաւոր է իւր վրայ առնել արիւնհեղութիւնը դադարեցնելու սկզբնաւորութիւնը: Արիւնահեղ ընդհարումները յառաջ բերող պատճառները բացատրելու համար դումարած հայերի ու մուսուլմանների լիազօրների համաժողովը յարմար առիթ է դրա համար: Անհրաժեշտ է մայրաքաղաքի հասարակութեան միացումը նրա կարծիքի և ցանկութիւնների արտայայտիչի—մամուլի հետ և իշխանաբար յայտնել երկու ազգութիւնների լիազօրներին, թէ Ժամանակ է կանգ առնել արիւն թափելու, ջնջելու ամենարնտիր մարդկանց, կործանելու մի շարք սերունդներով ձեռք բերած կարողութիւնը: Հասել է Ժամանակը ձեռք դարկել ուրիշ գործերի, դեմսովային, ընտրողական, որ նոյնպէս շատ կարեւոր է, եթէ չասենք թէ ամենագլխաւորն է բժշկելու այն ծանր վէրքերը, որ հասցրուած

են ամբողջ փոխարքայութեանը քաղաքական և ցեղական խառնակութիւններով»:

«Ալլահեար բէգ Զիւլգադարով»:

Եթէ ընթերցողն ուշի ուշով հետևել է նկարագրութեանս ընական ընթացքին, եթէ մտաբերում է այն յարաբերութիւնը, որ ունեցել է Ալլահեար բէգը Բագայի աւերումից առաջ, աւերման ժամանակ և յետոյ, նա կտեսնէ, թէ ի՞նչ տարբերութիւն կայ բէգի նամակի բովանդակութեան և իսկական փաստերի համեմատութեան մէջ: Երկասիրութեանս հեղինակը չէ ցանկանում համեմատական քննութեան ենթարկել Պ. Զիւլգադարովի նամակի բովանդակութիւնը, որովհետև նա աշխատել է լինել անկողմնապահ, աքնել է դուրս բերել միայն փաստեր և ապա կարելոյն չափ լուսաբանել տեղական բէգերի դրական և բացասական յարաբերութիւնները թուրք—հայկական ընդհարումների ժամանակ Բագայի սահմանում:

Ալլահեար բէգի վերը բերած նամակի կողքին աւելորդ չէ դնել նոյն այդ բէգի և նրա եղբոր Մեհրաբի բէգի ճառը, որ պարոնները Ղազախի գաւառապետ Առնուդի ընակարանում, 1905 թուի սեպտեմբերի 11-ին ճաշկերութեան և կենացների ժամանակ, Ղազախի աւերումից առաջ, արտատանել են, թէ «իրանցում ամէն ինչ խաղաղ է և եթէ իրանը չցանկանան, չի կարող թուրքերի կողմից ընդհարում առաջանալ»*:

Իսկ յետոյ, ընդհարումները արդէն տեղի ունեցան: Եզրակացութիւն . . .

Սորանով վերջացնում եմ Բագա գիւղի աւերման պատմութիւնը և նրա ժողովրդի ցրիւ գալը: Հետևեալ տարին, այն է 1906 թուականի գարնանը հալածուած, ամէն բանից զրկուած ժողովրդի մեծ մասը սակաւ առ սակաւ սկսեց վերադառնալ աւերուած հայրենիքը՝ կրկին նորոգելու այն ժողովրդի մի փոքր մասը միայն մնաց ցանուցիր հայ գիւղերում:

Կովկասի բարձր իշխանութեան կարգադրութեամբ հաշտարար միջնորդ Իվան Պետրովը 1906 թուին Ապրիլի 10—25-ը Բագայի աւերակներում սկսեց ցուցակագրել բոլոր գիւղի կրած վնասի քանակութիւնը, որ ինչպէս յիշատակուած է Ա. գլխում, կազմում է երկու միլիոն երկու հազար երեք հարիւր ռուբլի: Ցուցակագրութիւնը կազմելու համար Պ. Պետրովը զանազան հայ գիւղերից հաւաքել էր մօտ 150 բագայի հայեր և

* Արշալոյս № 14—1903 թիւ. սեպտ. 46. Նամ. 2. քահ. Ապրեսեանցի:

բազմաթիւ թուրքեր Իրմաշլուկց, Խըննալից, Վերին և Ներքին Այիլուկց, Թաթալուկց և Կոյլասարից:

Բազայի աւերումից յետոյ այս առաջին անգամն էր, որ երկու դրացի թարմ ոսոխները հանդիպեցին իրար սոյն այս թուրքերի ձեռքով քարուքանդ արած, աւերակ դարձրած գիւղում: Մանօթ թուրքերը չբմեղ ձեանալով մօտենում էին հայերին և արդարանում ասելով «Մարգիմադարն էօվը Ալլահ երիւթըն» (վատ մարդկանց տունը Աստուած քանդի):

Իւրաքանչիւր երեկոյ թուրքերը վերադառնում էին իրանց գիւղերը, իսկ հայերը մնում էին իրանց աւերակներում: Աշինչ չունէին ուտելու: Գանձակից ստացուած մի կտոր ալիւրից հայերը խմոր էին շաղախում պաղ ջրով (եռացնելու աման չկար) և երկաթէ տանիքից մնացած թիթեղի վերայ և կամ կտրած կաւէ ամանի յատակում թխում:

Որովհետեւ հայերը Բազայի ջնջումից յետոյ առաջին անգամն էին եկել այստեղ, ուստի ձորերում և խորշերում ցանուցիւր եղած սպանուածների և մեռածների մարմինները ժողովեցին ամփոփելու: Դիակներից, փափուկ մասերը թռչունների և գաղանների կերակուր դառնալով, միայն կմախքն էր մնացել: Մեծ դժուարութեամբ էին ճանաչում հանգուցեալներին: Որ և է շորի կտոր, գուլբա կամ ոտնամօտն նշան էր լինում ճանաչելու: Ճանաչուածներին թաղում էին առանձին, իսկ չճանաչուածներին թաղեցին միասին մի շիրմի մէջ: Թաղման տխուր հանգէսը կատարուեց 1906 թուի Սպրիլի 14-ին:

Գերեզմանատան մէջ նկատելի էին շատ գերեզմաններ բացած և կրկին ծածկած. յարձակման ուղասելու օրերում ոմանք բազայիւր աշխատում էին թաղեցնել գետնի տակ իրեղէններ: Սրանց թւում Սիմոն Ազրիեանցը իւր խանութի ապրանքը կապոցներով իբրեւ հանգուցեալ թաղել էր գերեզմանատանում, ապա երբ ծածուկ հանել է, թուրքերը նկատել են և ձեռքիցը խլել: Սրանից յետոյ արդէն սկսել են բորենի դառնալ և գերեզմանները քանդել: Միայն դիակներ գտնելով՝ նորից ծածկել են:

Վ Ե Ր Զ Ա Ռ Ա Ն

Մինչև այս կէտը խօսուեց Բազա գիւղի միմիայն աւերման և քնակչութեան ցրիւ ցրիւ դալու մասին, բայց երկբայեւ չէ կարելի, որ հալածուած ժողովուրդը նորից կհաւաքուի իւր հին գիւղը, նորից կաքնի, կճգնի, կկարի իւր ուղադուած ուժերը և տարիների ընթացքում նորից կշէնացնի իւր հայրենիքն ու

ծննդավայրը: Սակայն հարկաւոր չէ գոհանալ, միւթարուել միայն որանով:

Առաջին անգամը չէ, որ Բաղան ենթարկուում է աւերման և աղէտի: Եթէ Բաղան գոյութիւն ունէր տասներեքերորդ դարում, նա իւր հարեան Շամբօրի հետ միանուազ պէտք է ենթարկուած լինէր աւերման թաթարների տապաառկութեան ժամանակ*: Նրանից յետոյ էլ պէտք է աւերուէր Կափկասեան լեռնազան հրոսակների ձեռքով, նոյնպէս և Աղամամադ խանի ժամանակ:

Աւանգութիւնից և անգամ ժամանակակից տիպաւորներին բերանացի վկայութիւններից յայտնի է, որ 1826 թուի դարնանք, Ռուս—Պարսկական պատերազմի սկզբում թշուառ Բաղան էլի ենթարկուել է երեանի Սարգսր՝ Յիւսէին խանի սարքազների առաջադրութեան: Աւերուել է դիւղը, բնակիչներին շտաբը պանուել են, շտաբը ցրուել են, կանայք, ողջկույք և երեխայք գերի են տարուել: Բաղացի Բեղաս մականուանակ Յակօբ քահանան, երկաթէ շղթան վիզը ձգած (գերի ունեցողին նշան) մի ամբողջ տարի մուրացկանութեամբ ժողոված գումարով հազիւ կարողացել է ազատել գերութիւնից իւր կնոջը և երկու դուստրներին:

1826 թուի աւերումը և սպասելի էր և բնական, որովհետեւ դիւղը մօտիկ էր պատերազմի դաշտին և տեղական թուլք տարրը ուղեցոյց և առաջնորդ էր սարքազներին:

Դրանից 80 տարի յետոյ, 1905 թուին Բաղան նորից ենթարկուեց աւերման, այն էլ ոչ թէ օտարահպատակ սարքազների ձեռքով, պատերազմի միջոցին, այլ դրացի աւաններից: Ինչպէս 80 տարի յետոյ, նոյնպէս և 80 տարի առաջ դիւղի հարստութիւնը կողոպտուեց, մարդիկ սպանուեցին, իգական սեռը ու մանուկները գերի գնացին: Աղէտները Բաղային խրատական չեղան: 80 տարի առաջ և յետոյ ինքնաճանաչութիւնից զուրկ ժողովուրդը մնաց նոյնը. նա 26 թուին գէնքի փոխարէն հսկումն էր կատարում եկեղեցում Բեղաս տէր Յակօբի ձեռքով: Նոյն հսկումը կատարուեց և 1905 թուականին:

Զուենեցաւ այդ ժողովուրդը այնպիսի ինքնաճանաչութիւն և հասարակաց կադմակերպութիւն, որ անակնկալ փառքի ժամանակ կարողանար ինքն իրան պաշտպանել կամ եթէ մեռնելու էր, թող մեռնէր զէնքը ձեռքին ... Ինքնապաշտպանութեան գործում 26 թուի Բաղացիները ապաւինել էին միայն Աստուծուն, իսկ 1905 թուի Բաղացիները ապաւինել էին և Աստուծուն

* Կիրայոս վարդապետ Գանձակեցի. Վենետիկ 1865. զլ. ԻԱ. էջ 128:

և Ալլահեար բէգ Զիւլքարաբուլին . . . երկու անգամն էլ կորստեան մասնուեցին:

Բաղային զրոյցի Չարգախալու գիւղի հայերը 1905 թուի յարձակումների ժամանակ պաշտում էին Աստծուն, գիտէին և Ալլահեար բէգի տեղը, բայց նրանց ապաւէնն էր «սահման քաջաց՝ զէնք իւրեանց» և կորստեան չմասնուեցին:

1800 թուականին չէր կարելի գուշակել Բաղայի 26 թուի աւերումն, ինչպէս վերջին թուականին անկարելի էր գուշակել 1905 թուի աղէտը: Հետեալաբար չէ կարելի գուշակել և ապագայի արհաւիրքը: Սակայն մի հասարակութիւն, իբրև մի ամբողջութիւն և կազմուած մարդկային էակներից և ոչ անբան անասուններից, պարապաւոր է իւր գոյութիւնը, գոյքը և պատիւը պահել և պաշտպանել իւր սեփական միջոցներով և իւր հաւաքական հասարակական ոյժերով, որի համար էլ հարկաւոր է կրթել՝ նախապատրաստել սերունդներ՝ գործելու այդ ուղղու թեամբ:

Բայց որովհետեւ երկարագոյն միջոցներում սերունդները կարողանում են մոռանալ մըրկալից անցեալը, ուստի սոյն աշխատութիւնս իւր բովանդակութեամբ Բաղայի ժողովրդի համար թող լինի յուշարար:

Քաջբերունի.



ԿԱՆՏԻ ԻՄԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

3. Քննադատական—իմացաբանական մերոդ.

Ա. Հարցերը դրուած են. արդ՝ ինչպէս է մօտենում կանոնը հարցերին և ինչպիսի ընթացքով է շարժւում նրա մտածողութիւնը:

Կրիտիքական աննախադրեալ և կանխակալ աչառութիւնից (գէպի վերոյիշեալ երեք գիտութիւններից մի որ և է մէկը) բարձր հայեցակէտը իւր դատողութիւնները չպիտի հիմնէ փաստի վրայ և փաստից բղխեցնէ. այսինքն՝ տեսնելով որ իբրև փաստ գոյութիւն ունին այդ գիտութիւնները և կանխաւ ունենալով առաջին երկուսի ճշմարտութեան մասին համոզմունք՝ չպէտք է աշխատի հիմնա-